թիւն մեծամեծաց և աշխարհն ամենայն միախոհք եղեն, և զայս Զիկմոնդ թագաւորն կամէին առնուլ ի հօրէ իւրմէ՝ ի թագաւորութիւն, որպէս թէ այս երկրիս զարմէ է։ Եւ այլք իշխանաց հակառակէին և չկամէին. վասն զի հակառակողքն իւրեանց կողմանէ բերեալ էին զոմն՝ կայսրն Մաքսիմիանոս անուն, և զնա կամէին դնել թագաւոր. զոր ունայնախորհքն վրիպեցան ի խորհրդոց իւրեանց. և աստուածային կամաքն և ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ խսկոյն միաբանեցան այս Զիկմոնդ թագաւորիս հօրն, զի զորդին իւր տացէ ի թագաւորութիւն. և նա ետ նոցա յօժար կամաքն. և բերեալ նստուցին ի թագաւորութեան յաթոռն, ի թագաւորանիստ քաղաքն ի Քրաքովն. և յետ սակաւուց օծեցին և պսակեցին, ողորմութեամբն Տեառն, և հաստատեցին շնորհիւն Աստուծոյ։ Եւ այդ միւս կողմ Մաքսիմիանոսին, որք էին թշնամիք այս Զիկմոնդ թագաւորիս, հակառակ կային ճշմարտութեան, և զիւրեանց չարութիւնն առնել, և ոչ կամեցան հնազանդել այս թագաւորիս Զիկմոնդին. և սկսան զիւրեանց զչարիսն և թշնամութիւն առնել այս թագաւորիս, զերկիրն աւերակ և հրձիգ առնելով, և բազում պակասութիւն և վնաս գործելով այդ երկրին բնակչացն. մինչ զի ձեռն արկանելով եկեղեցեաց, կողոպտելով և թալանելով սպասք և զանօթք եկեղեցոյ. այլ և բազում անմեղ և անպարտ արանց հեղլով զարիւն։ Իսկ բարեգութ և մարդասէր Աստուած՝ իւր ամենակարող զօրութեամբ զօրացոյց այս թագաւորիս կողմն, և ետուր նոցա քաջութիւն։ Զոր գնացեալ մեծ զօրագլուխն որ կոչի Զամոքիյ, քանցլէր այս թագաւորիս, քաջ և յաղթող հմուտ պատերազմի, զօրքն իւրովք, և պատերազմեցան ընդ զօրացն Մաքսիմիանոսի, և Աստուծոյ կարողութեամբ խսկոյն յաղթեաց նոցա և ի սպառ կոտորեաց զնոսա, և զինքն զՄաքսիմիանոս կենդանի ձերբակալ արար, և զայնոսիկ որք ընդ նմա միաբանեալ էին այս երկրիս իշխանքն, և էին ամենայն ոք մեծամեծք և առաջակայք, զամենեսեան կենդանի կալաւ, և երկաթի կապանօք էած առ ոտս թագաւորի Զիկմոնդին, ամօթալիս երեսօք և կորացեալ գլխով։ Եւ այս գործն Աստուծոյ զքանչելարարի է. զոր նմա փառք և գոհութիւն ամենայնի, որ տայ քաջայաղթութիւն հաւատարիմ ծառայից իւրոց ընդդէմ թշնամեաց իւրոց։

1589. Հայոց թվ. ՌԼԷ. Օգոստոսի. Ի Կամինից քաղաք մեծ մահ եղաւ, և բազում հոգիք մեռան, Հայք և Ֆռանկ և Ըռուզք. զոր ոչ ժամանէին ի հող հասուցանել։ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց. հազար փառք և պատիւ անմահ երկնաւոր թագաւորին, յաւիտեանս. ամէն։

1589. թվ. ՌԼԸ. Օգոստ. ամսոյ. Բազում և անթիւ թաթար եկաւ, և բազում պակասութիւն արաւ ի գաւառն Բոտոլիային, և եհաս մինչեւ Իլովի սահմանք և ի Լուցքային, և անթիւ գերի տարաւ, ոչ թէ միայն զռամիկ և զիղջք, այլ և զիշխանս և զմեծամեծս՝ կնաւ իւրեանց, թող թէ զոչխարս և զարջառս և զանասունս. և բազում հրձիգ արարին. զոր և զՍդրուսն